

եկան՝ զինուորներուն հրամայող տասնապետի մը ընկերակցութեամբ : Անոնց հասնելէն ետք Պաղչէի մէջ հրկիզեցին դեռ կանգուն մնացող չորս տուներէն մին :

Հակառակ այս ամէն սարսափներուն , որուն վկան եղանք մեր անցքին վրայ ամէն տեղ , տեսանք Պաղչէի միւլֆիին — Չորք-Մարզուանի մէջ հսկողութեան տակ առնուած — որ իր ընկերներուն հետ ազատօրէն կը շրջէր :

Մեր քննութենէն կատարելապէս համոզուեցանք որ Բամազանի Պայրամէն առաջ իսլամներու և քրիստոնեաներու միջև յարաբերութիւնները լաւ էին : Այդ թուականին է որ Չարդի շշուկները շրջան ընելու սկըսան : Այս խնդրոյն մասին բողոք բարձուած է Ճէպէլի-Պէրէքէթի կառավարիչին մօտ , ու այդ պատճառով նոյն իսկ դատական քննութիւն մը բացուած է :

Բացի այս տարածուած զրոյցէն՝ որուն համաձայն Պաղչէի միւլֆիին իր քարոզներուն մէջ յայտարարած է թէ Սահմանադրութիւնը Հայերու գործն էր . թէ Սահմանադրական Վարչութիւնը Իսլամներուն փաստակար էր և թէ անոր հաստատած հաւասարութիւնը՝ Շէրիաթին հակառակ , այս միւլենոյն միւլֆիին օր առաջ տեղեակ էր այն դէպքերուն՝ որոնք չորեքշաբթի առտու պիտի ծագէին Առանայի մէջ , ու միւլենոյն օրուան իրիկունը Համիտիէի մէջ գիշերանց մարդ զրկած էր Հարունիէ՝ Հաճի Հալիլ պէյի և Հասան ազայի ետեւէն , անոնց հետ կազմակերպելու համար այն Չարդը և կողոպուտը՝ որոնց ուրբաթ սկսան :

Գարձեալ այս միւլենոյն միւլֆիին է որ Պաղչէի մէջ 30 ոսկի կաշառք գրպանած է Գերմաններէ՝ տեղւոյն մէջ ասոնց վարձած տունը պաշտպանելու համար :

Հակառակ անոր որ այս փաստերը ո՛չ մէկ հերքում կը վերցնեն , վերին աստիճանի զարմացած եմ